Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է «Օհանյան և գործընկերներ» ՍՊԸ-ի և «Երմեդ» ՍՊԸ-ի միջև 11.07.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը, որի 3.1 կետի համաձայն՝ ծառայությունների մատուցման գինը կազմում է 500.000 ՀՀ դրամ .... դրական արդյունքի դեպքում պատվիրատուն կատարողին է վճարում 500.000 ՀՀ դրամ գումար, որպես հոնորար:

Դատարանը հիմք ընդունելով նշված իրավակարգավորումները և վերլուծելով քննված գործի առանձնահատկությունները գտնում է, որ ուշադրության է արժանի և գնահատման են ենթակա հետևյալ փաստերը՝

- գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով, առանց դատական նիստ հրավիրելու:

- ծառայություններն ըստ էության արտահայտվել են հայցադիմումի և հայցադիմումի պատասխանի վերաբերյալ դիրքորոշման կազմամբ և դատարան ներկայացմամբ, ապացույցներ ձեռքբերմանն ուղղված գործողություններ չեն կատարվել և դրանք հանդիսացել են Հայցվորի տիրապետման ներքո գտնվող:

Վերոգրյալի արդյունքում Դատարանը գտնում է, որ սույն գործով փաստաբանի խելամիտ վարձատրության չափ է հանդիսանում 70.000 ՀՀ դրամը, որը ևս՝ հաշվի առնելով հայցի ամբողջությամբ բավարարումը, ենթակա է հատուցման Պատասխանողի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. «Երմեդ» ՍՊ ընկերության հայցը բավարարել. Անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի՝ «ԵՐՄԵԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 21.06.2024թ.-ին կայացված թիվ 3415-Ա հրամանը:

2. ՀՀ առողջապահության նախարարությանից հօգուտ «Երմեդ» ՍՊ ընկերության որպես դատական ծախս բռնագանձել՝

2.1. 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար.

2.2. 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Մնացած մասով դատական ծախսերի բռնագանձման պահանջը մերժել և դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am